Ամանորն առանց հրդեհների

Հրդեհային անվտանգության ապահովումը ցանկացած իրավիճակում պետք է հանդիսանա մեր առօրյայի անբաժանելի մասը: Այդ ուղղությամբ Վայոց ձորի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից շարունակաբար տարվում են հակահրդեհային քարոզչական աշխատանքներ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության հետ: Հրդեհային անվտանգության պահանջների կատարման նկատմամբ դրսևորելով առավելագույն պատասխանատվություն հնարավոր է խուսափել հրդեհներից և դրանց անցանկալի հետևանքներից: Առջևում ամանորն է, որն ուղեկցվում է մարդկանց զանգվածային ներկայությամբ տոնական միջոցառումներով, ինչին բնորոշ է հրդեհների առաջացման բարձր ռիսկը: Ստորև ներկայացվում են հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները, որոնց անվերապահ կատարումը հնարավորություն կտա խուսափել հրդեհների դեպքերից:

Դրանք հետևյալն են.

- մարդկանց զանգվածային ներկայությամբ շենքերում, շինություններում և բաց տարածքներում ամանորյա և այլ տիպի միջոցառումների անցկացման ժամանակ անհրաժեշտ է՝
- տոնածառը տեղադրել ընդարձակ սենյակում (որն ունենա մեկից ավելի տարհանման ելք), կայուն հենամասի վրա այնպես, որպեսզի ճյուղերը չկպնեն պատերին և առաստաղին.
- ապահովել առնվազն մեկ մետր միջտարածություն տոնածառի ու դյուրավառ իրերի, առարկաների միջև.
- տոնահանդեսի անցկացման վայրում էլեկտրական լուսավորության բացակայության դեպքում միջոցառումներն անցկացնել ցերեկային ժամերին.
- տոնածառի վրա օգտագործել լամպերի շղթաներ մինչև 12 Վտ հզորությամբ լամպերի հաջորդական միացմամբ՝ առանց ցածրացնող տրանսֆորմատորի.
- լուսավորության անսարքություններ հայտնաբերելու դեպքում (լարերի տաքացում, լամպերի թարթում, կայծարձակում և այլն) սարքն անմիջապես հոսանքազրկել.
- բեմում և դահլիճում կազմակերպել հրշեջ հերթապահություն՝ կազմակերպիչների ուժերով:

Արգելվում է՝

- օգտագործել աղեղնավոր լուսարձակներ, լուսավորել մոմերով, վառել հրավառելիք, ստեղծել այլ լուսային հրդեհավտանգ էֆեկտներ, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.
- օգտագործել գնդակներ, փուչիկներ, խաղալիքներ և զարդարանքի միջոցներ, որոնք պատրաստված են հրդեհավտանգ, ինչպես նաև ինքնայրման հակում ունեցող կամ միմյանց հետ շփվելիս այրում կամ պայթյուն առաջացնող նյութերից և պարունակում են հրդեհապայթյունավտանգ գազեր.

- տոնածառը տեղադրել անցումների վրա, միջանցքներում, դռան առջև.
- տոնածառը զարդարել հրապաշտպան բաղադրություններով չտոգորված ցելուլոիդե խաղալիքներով, թանզիֆով, բամբակով.
- միջոցառումների անցկացման տեղերը մթնեցնելու համար պատուհանները փակել ծածկոցափեղկերով.
- փոքրացնել կարգերի միջև եղած հեռավորությունները, ինչպես նաև անցումներում լրացուցիչ բազկաթոռներ տեղադրել.
- միջոցառումների ժամանակ դահլիճում լույսը մարել.
- ելքի նախամուտքերում, տարհանման ուղիներում պահել որևէ տեսակի գույք և նյութեր, խցանել տարհանման ելքերը.
- տարհանման ճանապարհներին ստեղծել մարդկանց ազատ տարհանմանը խոչընդոտող հարմարանքներ.
- օգտագործել սարքեր և սարքավորումներ, երբ շահագործման պայմանները չեն համապատասխանում արտադրող կազմակերպությունների երաշխիքներին, ինչպես նաև անսարքությունների դեպքում, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.
- շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ և էլեկտրալարեր.
- օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից և այլ տիպի էլեկտրական հարմարանքներից և սարքերից.
- էլեկտրալամպերը կամ ջահերը փաթաթել թղթով կամ այլ այրվող նյութերով.
- բեմի վրա ծխել, օգտագործել բաց կրակ, աղեղային լուսարձակներ և կրակային այլ էֆեկտներ.
-երեխաներին առանց հսկողության թողնել տոնածառների մոտ:
Ամանորյա հանդիսությունների համար նախատեսված տեղերում անհրաժեշտ է մշտապես ունենալ հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչ, ջուր, ավազ և այլն:
Տոնածառերի հսկողությունը պետք է իրականացնեն նախօրոք հրահանգավորում անցած անձինք:

Բաց հրապարակներում հատուկ էֆեկտների կիրառման անհրաժեշտության դեպքում, հրդեհները կանխելու նպատակով, պատասխանատու անձի կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան հակահրդեհային միջոցառումներ, նախատեսել հրդեհաշիջման միջոցներ: Զանգվածային միջոցառումների ժամանակ հնարավոր հրդեհներ, բարձր ջերմաստիճանային բոցավառումներ, պայթյուններ առաջացնող հրագործական արտադրատեսակներ օգտագործելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել դրանց վտանգավորության աստիճանը, որոշել անվտանգության գոտիները, որպեսզի չայրված աստղիկները գետնին ընկնելու դեպքում բացառվի հրդեհի բռնկումը:
Ամանորյա տոների ընթացքում բնակչության անվտանգության ապահովման նպատակով մշտապես իրականացնում է նպատակային հրդեհատեխնիկական հետազոտություններ համապատասխան օբյեկտներում (մարզամշակութային, մանկական, ուսումնական, հանգստի, ժամանցի և մարդկանց զանգվածային ներկայությամբ այլ օբյեկտներ):

Զանգվածային լրատվամիջոցներով, ինչպես նաև ուսումնասիրված բոլոր օբյեկտներում իրականացվում են հակահրդեհային քարոզչական աշխատանքներ՝ հրդեհային անվտանգության կանոնները պահպանելու և տարատեսակ հրդեհապայթյունավտանգ հրավառություններ, ճայթռուկներ չօգտագործելու վերաբերյալ:
Բարեբախտաբար, վերջին տարիներին նմանօրինակ օբյեկտներում տեղի ունեցած հրդեհների քանակը նվազել է, իսկ մարդկային զոհեր չեն եղել: Սակայն պետք չէ մտածել,

որ վիճակը շատ բարվոք է և հնարավոր չեն հրդեհային անվտանգության կանոնների տարատեսակ խախտումներ: Հետագայում ևս հրդեհներից ու դրանց աղետալի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, անվերապահորեն կատարել տեսչության կարգադրագրերով առաջարկված հակահրդեհային միջոցառումները, չխախտել հակահրդեհային կենսակարգը:

Կարևոր է հասկանալ, որ անվտանգության կանոնների պահպանումը մեծ ջանքեր չի պահանջի, փոխարենը կապահովի անվտանգությունն ու բարձր տրամադրությունը ամանորյա հանդիսությունների ժամանակ:

Վայոց ձորի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն